ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

ֆինանսական հաշվետվության աուդիտ

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք աուդիտի ենք ենթարկել ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» հաշվապահական հաշվեկշիռը առ 1-ը հունվարի 2008թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի առ 1-ը հունվարի 2008թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացված՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառման չափանիշներին համապատասխան:

տնօրեն՝ Գ. Վարդանյան

աուդիտոր՝ Ս. Վարդանյան

04.03.2008թ.

«ՍԱԹԵՆ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ, ք. Երևան, Դավիթ Անհաղթի 3շ, բն. 2, հեռ. 28 46 99